

Դ. ԱՆԱՆՅՈՒՆ


# ԲԱՆԻՈՐԱԿԱՆ • • ՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐԸ

(Ապահովագրութիւն հիւանդութիւնից և դժբախտ  
պատահարներից)

Գինը է 5 կղգ.



Դ. ԱՆԱՆՅՈՒՆ Նовые страховые законы



368.4

Ա-57

ռ. Գ. Պ.

. Н. А. Эриванцова, Баку.  
Տպարան Ն. Երևանցեանի

1914

7685

74

187 44

14

368.4  
L-57

1 MAR 2010

4540

Դ. ԱՆԱՆՅՈՒՆ




ՀԱՆԻՈՐԱԿԱՆ Ը  
ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ

(Ապահովագրութիւն հիւանդութիւնից և դժբախտ  
պատահարներից)

ԳՐԱՆԻ, Ե 5 ԿՈՂ.

Д. АНАНҮНԻ Новые страховые законы



Բ. Ա. Գ. Ո. Ւ.

Տիպ. Н. А. Эриванцова, Баку.

Տպարան Ն. Երևանցեանի

1914

11 FEB 2013

99.038



ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ

• ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴՐԱՄԱԿԱՆ ԴՐԱՄ •

1912 թւականի Յունիսի 23-ին Բարձրագոյն հաստատութիւն են ստացել երկու նոր օրէնք, որոնք դալիս են ապահովելու բանուրներին հիւանդութիւնից և գժրախտ պատահարներից, Օրէնքները նախ և տուաջ անցել են Պետական Դումայի և Պետ. Խորհրդի քննութեան բովից, և այդ երկու հիմնարկութեան յետագէմ մեծամասնութիւնն իր կնիքն է գրել նրանց վրայ, այսինքն որքան կարելի է զիշել քիչ, իսկ զիշածն էլ պայմանաւորել հազար ու մի սահմանափակումներով և ոստիկանական խնամակալութեամբ: Եթէ իր ժամանակին բանուր դասակարգն լայն հետաքրքրութիւն և ցայտուն մասնակցութիւն ցոյց տար դէպի քննուող օրէնքները, հաւանօրէն այսօր նրանք խմբագրւած կինէին մի չափով յօդուած բանուրների: Սակայն այդ հետաքրքրութիւնը նա ցոյց չտեսց և հիմա ստանում է այն, ինչ կամեցել են տալ տիրող դասակարգերը: Այսպէս թէ այնպէս նոր օրէնքները հաստատւած են, այժմ Առետրի և Արդի՛ւսաբերութեան մինիստրութիւնը եռանդ և ջանք չի խնայում կեանքի մէջ մտցնելու նրանց. և գոնէ հիմա բանուրները պիտի հեռու կենան անտարբերութիւնից և իրենք էլ հետեւին, թէ ինչպէս են մացնուած նոր օրէնքները, արդեօք չեն կամենուած լսել և բանուրների կարծիքը. վերջապէս, նրանք պիտի ծանօթանան նոր օրէնքներին,



813-2009

որպէսզի տեղեակ լինե ովնբան՝ կարողանան յաջող կիրապով պաշտպանել իրենց սեփական, իրենց ընտանիքի, ընկերների և ամբողջ բանւոր գասակարգի շահերը։  
Ծանօթանանք ուրեմն նոր օրէնքներին։

I

Թէ ով պիտի ըսկէ նոր օրէնքների գործադրութեան վրայ։

Ասենք առայժմ ընդհանուր կերպով որովհետեւ մանրամասն բացատրութիւնները պիտի լինին յետոյ, որ նոր օրէնքները կարգ ու կանոն են հաստատում այն մասին, թէ ով պիտի բժշկէ հիւանդ բանւորներին և ում ծախսով, ումնից պիտի ստանան այդ բանւորները հիւանդութեան պատճառով կորցրած աշխատավարձը և ինչ չափով. մի խօսքով ինչպէս պիտի բանւորներն ապահովին հիւանդութիւնից, և յետոյ ով պիտի վճարէ վասւած, հաշմանդամ գարձած կամ գործի մէջ սպանւած բանւորների կորուստը, այսինքն ինչպէս պիտի բանւորներն ապահովին գժբախտ պատահըներից. Պարզ է, թէ բանւորների համար ինչ կարեոր հանգամանքներ են շօշափում նոր օրէնքները։ Հիմա տեսնենք, թէ գործնական կեանքում ով պիտի մոցնէ այդ օրէնքները, հակէ նրանց անթերի կատարման վրայ և ուղղութիւն տայ նրանց։

Ամեն մի նահանգում, որի վրայ տարածւելու են ներկայ օրէնքները, հիմնում են բանւորների ապահովագրման գործերի ատեաններ (Присутствіе по дѣламъ страхованиѧ рабочихъ); Այդ ատեանները կազմում են հետեւալ պաշտօնիաներից և ներկայացուցիչներից. Նախագահը՝ նահանգգաղետը կամ քրան համապատասխան մի այլ պաշտօնեայ (օրինակ, քաղաքապետը), անդամները՝ փոխնահանգապետը (կամ քաղաքապետի օգնականը և այլն), գանձարանային պալատի կառավա-

րիչը, նահանգգական դատարանի դատախազը կամ նրա ընկերը, զլիսաւոր գործարանային տեսուչը, բժշկական տեսուչը, ներքին գործերի մինիստրութիւնից նշանակւած մի ատեաննաւոր, գործարանային տեսուչը, երկու անդամ նահանգգական զիմսավոից, մի անդամ քաղաքային ինքնավարութիւնից, երկու անդամ գործարանատէրերից և երկու անդամ էլ հիւանդանոցային դրամարկների մասնակցողներից, այսինքն բանւորներից։ Այն նահանգներում, սրտեղ զեմստփո դեռ գոյութիւն չունի, գործարանատէրերն ու բանւորներն ընտրում են երեքտկան անդամներ, Այսպիսամ մենք տեսնում ենք, որ բանւորների ապահովագրման գործերի ատեանները, հիմնում են այնպիսի հաշուվ, որ պաշտօնիաներն ու ունեւոր գասակարգերի ներկայացուցիչները կազմեն ձնշող մեծամասնութիւն։ Ապա նայեցէք, ատեաններն ունին 8 անդամ պաշտօնեայ, 3 անդամ տեղական ինքնավարութիւններից, ինքնավարութիւններ, որոնց մասնակցում են ունեւոր ազնւականներն ու բուրժուանները, ապա երկու անդամ ձեռնարկողներից, Էլի ունեղորներից և բանւորների անմիջական շահագործողներից և յետոյ միայն երկու անդամ բանւորներից. ուրեմն բանւորները կանգնում են երկուսով տամներիքի դիմաց! Տղայամտութիւն կլինի կործել, թէ ատեանի անդամ պաշտօնեանները կը ցանկանան կամ կարող կլինին բռնել բանւորների կողմը։ Դասակարգային պետութեան մէջ, ուր կառավարութիւնը ունեղորների գործադիր օրգանն է, այդպիսի բան չի լինում։ Ապա չկարծէք, թէ ատեաններն աննշան դեր պիտի խաղան բանւորների կեանքում, և բանւորների համար անարժէք է զբաղւել նրանց կազմի և իրաւունքների հարցով։ Ինկատի ունեցէք, որ հիւանդ բանւորները տկարութեան ընթացքում օժանդակութիւն պիտի ստանան այսպէս կոչւած հիւանդանոցային զբամարկներից (ՅՈՒՆԻԿԱԿԱ կասց), որոնց պիտի մասնակցեն թէ անդամավճար-

ներով և թէ գործավարութեամբ նաև իրենք: Այդ զրամարկղների ամբողջ բախտը կախւած է ատեանսերից: Նրանք են քննում գրամարկղի գործավարութիւնը, հաստատում նրա վարչութիւնը, հեռացնում վարչութեան անդամներին, հրաժարակում պարագիր կանոններ, հաստատում կանոնագրութիւններ, ծաւալում օրէնքը նոր ձեռնարկութիւնների վրայ և այլն: Դրանք չափազանց կարեոր հանդամանքներ են և բանուորների համար խիստ նշանակալից: Մինք յիտոյ, օրէնքի բացարութեան մէջ, դեռ կիսունք այդ մասին: Այժմ կամենում ենք շեշտել, որ բանուորների ապահովման գործերի ատեանները խիստ կարեոր հիմնարկութիւններ են, և զրանց մէջ բանուորներին յատկացրւած է աննշան տեղ: Բայց, ինարկէ, ինպիրը նրա մէջ չէ, թէ ինչպէս է կազմակերպւած այս կամ այն վարչական ատեանը, այլ թէ ինչ կացութեան մէջ է գտնում հասարակուկան այս կամ այն խմբակցութիւնը: Բանուորները ատեաններում ունին երկու անդամ: Եթէ նրանք դուրսը, գործարաններում և իրենց հիմնարկութիւններում (ալհետակցական միութիւն, կօօպերատիւ և այլն) լաւ կազմակերպւած լինին, ապա կարող կլինին ընտրել այնպիսի ներկայացուցիչներ և հնարաւորութիւն կունենան այնպիսի ուժով արձագանք տալու իրենց ներկայացուցիչների պահանջներին, որ ամբողջ ատեանը կամայ-ակամայ ստիպւած կըլինի զիջել բանուորութեան:

Տեղական ատեանները ենթարկում են բանուորների ապահովագրման գործի խորհրդին (Совѣтъ по дѣламъ стражеванія рабочихъ), որը պիտի կազմակերպւի Պետերբուրգում: Խորհուրդը դարձեալ կազմւած է մեծ թւով պաշտօնեաններից և ունեոր դասակարգերի ներկայացուցիչներից: Այսպէս՝ նախագահը Առեւտի և Արդիւնաբերութեան մինիստրը, անդամները՝ նրա ընկերը, լեռնային դեպարտամենտի վերատեսուչը, ար-

գիւնաբերութեան բաժանմունքի կառավարիչն և նրա օգնականը, առեւտի բաժանմունքի կառավարիչը, Առեւտի և Արդիւնաբերութեան մինիստրի խորհուրդի երկու անդամները, երկու անդամ ներքին գործերի մինիստրութիւնից, մէկ-մէկ՝ ֆինանսների, Արդարագատութիւն և Ճանապարհների Հաղորդակցութիւն մինիստրութիւններից, Գլխաւոր Հողաշինութեան և Հողագործութեան Վարչութիւնից, Բժշկական Խորհրդից, Պետերբուրգի վեմստվից, Պետերբուրգի քաղաքային ինքնավարութիւնից, հինգ անդամ ձեռնարկողներից և հինգն էլ բանուորներից: Այսեղ բացարկելու քիչ բան է մնում: Միայն թւերը ինչե՛ր են ասում: 13 մեծ ու փոքր բիւրոկրատ, 2 անդամ ինքնավարութիւններից, որտեղ նստում են խոչշոր հողատէրերն ու տնաւաէրերը, ապա 5 անդամ գործարանատէ՞րերից: և, վերջապէս, 5 բանուոր: 20 հոգու դէմ 5 հոգի: Եւ այդպիսով կազմւած խորհուրդը այն բարձրագոյն հիմնարկութիւնն է, որին ենթարկում է ողջ ապահովագրման գործը: Նա է օրէնքի գլխաւոր հսկիչը, նրա տարակուսանքներ յարուցանող կէտերի բացատրողը: Զըպէտք է մոռանալ, որ ամենալաւ օրէնքն էլ կարող է մի գժբախտութիւն գառնալ, եթէ օրէնքի գործադրութիւնը յանձննած է այնպիսի մարդկանց, որոնք իրենց հասարակական դիրքով անկախ են օրէնքից օգտագործների դիմաց: Այդ գժբախտութիւնը կարող է մեծանալ մանաւանդ այն ժամանակ, երբ այդ անպատճախանական մարդիկ ունին նաև օրէնքը բացատրելու իրաւունք: Այս խորհրդածութիւնները անկարելի է մոռանալ, երբ արդէն գիտենք ապահովագրման խորհրդի ինչ լինելը:

Բայց միթէ այս բոլոր հանգամանքները կարող են վհատեցնել բանուորներին: Ո՞չ: Օրէնքները չեն հրատարակում յաւիտեան անփոփոխ մնալու համար: Եթեկ մենք ապահովագրման օրէնքներ չունէինք: Այսօր ու-

Նիսք, թէկ մեր տեսակէտով խիստ անբաւարար: Վաղը կարող են այդ անբաւարար օրէնքները փոխւել և լաւահար: Միայն անհրաժեշտ է, որ օրէնքները փոփոխողներ լինին: Իսկ օրէնքները չեն փոփոխում սրա կամ նրա քրմահաճոյքի համեմատ, այլ նրանք միայն արտայացում են հասարակական այս կամ այն դասակարգի ոյժը: Եթէ վաղը բանւոր դասակարգը աշխատէ զգացնել տալ, որ իր հետ չի կարելի կատակել, այն ժամանակ էլ նրա օգտին կըթեքւէ օրէնսդրութեան նժարը: Օրէնքի աննշան բարելաւումը կարող է հրաշուլի զէնք դառնալ օրէնքից օգտւել իմացողների ձեռքին:

2.

Թէ ինչպէս զիջի ԲԱՆՈՒՐՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԻԵՆ ՀԻԼԱՆԴՈՒԹԻՒՆԻՑ

(1912 թ. յունիսի 23-ի օրէնիշի շուսամանութիւնների մեջ յինուրիւնը)

Բանւորի գոյութիւնը՝ պայմանաւորւած է նրա բանւորական ոյժի վաճառումով: Նա անշարժ գոյքերի և զրամի տէր չէ: Եթէ բանւորական ոյժը շուկայում գին ունի, ապա նա հացի ու բնակարանի տէր է: Զեղաւ այդ հանգամանքը, նրան մնում է պարապ թափառել և քաղցել: Հիւանդութեան դէպքում նա նոյնպէս սովի զո՞ն է, որովհետև նա հնարաւորութիւն չի ունեցել իր աննշան օրավարձից խնայողութիւն անել, իսկ առանց գրամի ոչ ճաց կայ: ոչ էլ բժշկութիւն: Բայց բանւորներն արդի հասարակութեան ամենապիտանի անդամներն են: Նրանք են արտադրում մեր գոյութեան համար անհրաժեշտ բարեիները, ուստի հասարակութիւնը չի կարող անտարբեր լինել, նա չի կարող ցանկանալ, որ նրանք զո՞ն զնան սովին և հիւանդութեանը: Միւս կողմից ինքը բանւոր դասակարգը լուս և մունջ

չի տանում իր գլխին թափւող պատուհաները: Նա կազմակերպւած պայքարով դարման է պահանջում իր դառն վիճակի համար: Այսպիսով բանւորների ապահովութեան հարցը դառնում է գերազանցապէս հասարակական խնդիր և զա լուծում է այն հղանակով, որ պետական կազմակերպութիւնը օգնութեան պիտի գայ բանւոր դասակարգին, որ նա, թէ հասարակական միջոցներով և թէ ձեռնարկողների վրայ բարձած առանձին հարկով պիտի ազատէ բանւորին սովի և հիւանդութեան դաժան ուրուականից:

Ուստաստանում պետութիւնը նոր է սկսել զրայւել բանւորների ապահովագրութեան հարցով, որովհետեւ երկրի բանւորութիւնն էլ նոր է գլուխ բարձրացրել և պահանջներ առաջազրել: Եւ նոր միայն, 1912 թ. յունիսի 23-ին հասարակւեցին երկու բանւորական օրէնք, մէկի գորութեամբ բանւորներն ապահովագրում են գժը ախտ պատահ արներից, իսկ միւսը նրանց ապահովագրում է հիւանդութիւնից: Մենք հիմա պիտի զբաղւենք վերջին օրէնքի քննութեամբ: Նա ապահովագրական գործը բաժանում է երկու մասի: Հիւանդութեան պատճառով անգործութեան մատնած բանւորների նիւթական օժանդակութեան գործը յանձնում է հիւանդանոցային դրամարկղներին (боլոնիկայ կաչու), իսկ նրանց բժշկութիւնը՝ ձեռնարկողներին, այսինքն գործարանատէրերին: Մասօթանանք ապահովագրական այդ երկու ձիւզերի հետ առանձին—առանձին:

Ընդհանուր ուղղումներ

Օրէնքին ենթակայ են հետեւել կարգի ձեռնարկութիւնները: Փարբիկներ և գործարաններ, լեռնահանգեր, լեռնագործարաններ, երկաթուղիներ, նաւագրնացութիւն ներքին գետերի, ջրանցքների և լճերի վրայ ու տրամաւյ: Օրէնքին ենթակայ ձեռնարկութեան մըշ-

տական բանւորների թիւը պակաս չպիտի լինի 20 հոգուց: Բացի այդ նրանք պիտի զբաղեցնեն շոգու, ջրի, էլեքտրականութեան կամ կենդանիների ուժով բանող շոգեկաթսաներ կամ շարժիչներ: Օրէնքը տարածում է նաև այն ձեռնարկութիւնների վրայ, որոնք, զուրկ լինելով կաթսաներից և շարժիչներից, զբաղեցնում են 30 և աւելի բանւորներ: Տեղական ինքնավարութիւններին (զեմստվօ. քաղաք) պատկանող ձեռնարկութիւնները ենթարկումեն ներկայ օրէնքին, իսկ գանձարանային վարչութեան և երկաթուղային ընկերութիւնների (հանուրին ծառայող) ձեռնարկութիւնները չեն ենթարկում: Ապահովագրում են բոլոր վարձու բանւորներն և ծառայողներն առանց սեռի և հասակի խրատութեան:

Ապահովագրական գլխաւոր խորհուրդը կամ տեղական ատեաններն իրաւունք ունին որոշ ձեռնարկութիւններ ազատել օրէնքի ենթարկումից կամ թէ օրէնքը տարածել նորերի վրայ, սակայն վերջին դէպքում պահանջում է, որ այդ ձեռնարկութիւնների իւրաքանչիւրի մէջ զբաղւած բանւորների թիւը պակաս չլինի 10 հոգուց:

### Հիւանդանոցային դրամարկղ

200 կամ աւելի մշտական բանւոր ունեցող ձեռնարկութիւնը հիմնում է իր առանձին հիւանդանոցային դրամարկղը: Եթէ այդքան բանւոր չկայ, ապահարեւն ձեռնարկութիւնները միանում են և գոյացնելով օրէնքի պահանջած բանւորների քանակը հիմնում են ընդհանուր դրամարկղ: Հիւանդանոցային դրամարկղներն ապահովագրական ատեանների թոյլտւութեամբ կարող են միանալ և ստեղծել աւելի խոշոր կազմակերպութիւն: Դրամարկղն մամնակցում են ձեռնարկութեան մէջ զբաղւած բոլոր վարձու աշխատաւորները: Մասնակցութիւնը սկսում է գործի կանգնելու օրից և դա-

գարում է բանւորի հեռանալու հետ: Դրամարկղներն իրենց հաշէտառութիւնը ենթակայ, են տեղական ատեանների իրաւասութեան, նրանք գործավարում են զլխաւոր խորհրդիչնով:

Դրամարկղ հիմնելու համար ձեռնարկութիւնը գիմէ գործարանային տեսչին և ներկայացնէ անհրաժեշտ տեղեկութիւնները: Դրամարկղն իրաւունք ունի իր վրայ վերցնելու նաև բժշկական օգնութիւն գործը: Նա պարտաւոր է օգնելու միայն իր անդամներին, բայց և կարող է այդ օգնութիւնը տարածել նրանց ընտանիքների վրայ:

### Բժշկական օգնութիւն

Բանւորները բժշկական օգնութիւն ստանում են ձեռնարկութիւնների հաշիւն: Այդ օգնութիւնը նրանք ստանում են՝ 1) յանկարծակի հիւանդութիւնների և զրժախտ պատահարների դէպքում, 2) որպէս ոտի վրայ բժշկութիւն (ամբուլատորային) և 3) որպէս հիւանդանոցային բժշկութիւն՝ հիւանդների և ծննդականների լիակատար խնամքով: Բժշկական օգնութիւնը հասկացում է՝ որպէս բժշկի անվարձ խորհուրդ, ձրի գեղեր, վիրակապեր և այլ բուժական իրեր: Թիթե հիւանդութեան դէպքում բանւորը, քանի նա աշխատանքից չի հեռացրւած, անարգել օգտւում է բժշկութիւնից: Իսկ երբ հիւանդն աշխատանքի անընդունակ է զառնում, ապա նրա բժշկութիւնից օգտւելու իրաւունքը շարունակում է չորս ամիս, եթէ նոյնիսկ հիւացել է գործից: Զեռնարկութիւնները բժշկական օգնութիւնն իրականացնում են ջոկ ջոկ կամ թէ վրա համար ստեղծում են ընդհանուր կազմակերպութիւն: Նըրանց համար պարտազիր է սկզբնական բժշկական օգնութիւնն և ոտի վրայ բժշկութիւնը: Հիւանդանոցային բժշկութեան համար նրանք պարտաւոր չեն սեփական կազմակերպութիւն ստեղծել: Այդ կարգի բըժշ-

կական օգնութիւնն իրականացնելու համար նրանք կարող են համաձայնութեան գալ զեմստվօնների, քաղաքային ինքնավարութիւնների, մտանաւոր մարդկանց կամ հիւանդանոցային դրամարկղների հետ և նրանց հիւանդանոցներն ուղարկել օգնութեան կարօտ բանւորներին:

Եթէ գոյութիւն չունի այդ պայմաններից և ոչ մէկը, ապա հիւանդն ընդհանուր կարգով իրաւունք ունի սժկւելու տեղական ինքնավարութիւնների հիւանդանոցներում: Ծախսը որոշ ստականով վճարում է ձեռնարկողը: Եթէ ձեռնարկողը բանւորներ է վերցնում կապալառուներից, ապա նրանց հիւանդութեան դէպքում պարտաւոր է բժշկական օգնութիւն հասցնել. ծախսը նա ստանում է կապալառուներից:

### Դրամական օժանդակութիւնն

Դրամարկղը օժանդակութիւն է տալիս հիւանդներին, դժբախտ պատահարներից վխասւածներին, յղիներին և ծննդականներին, իսկ մահւան դէպքում — թաղման համար: Օժանդակութեան չափը հետևեան է: ընտանիքաւոր հիւանդներին և հաշմանդամներին (վխասւածներին) նրանց օրավարձի կէսից մինչև երկու երրորդականը, ամուրիներին — քասորդից մինչև կեսը, ծննդականներին կէսից մինչև ամբողջ օրավարձը, թաղման ծախս քսանօթեայ օրավարձից մինչև երեսորեայ օրավարձ: Օժանդակութիւնը տրւում է հիւանդութեան չորրորդ օրից մինչև բժշկւալը, յամենայն դէպս մի նուագում այդ օգնութիւնը շարունակում է 26 շաբաթ, իսկ կրկնակի դէպքում 30 շաբաթ մի: տարւայ մէջ: Հաշմանդամներն օժանդակութեան իրաւունք ունին 13 շաբաթ: Ծննդականներն օժանդակութիւն ստանում են այն ժամանակ, երբ ծնկւոց առաջ երեք ամիս անդամակցել են դրամարկղն: Ծննդականը օգտագում է վեց շաբաթւայ օժան-

դակութեամբ: Դժբախտ պատահարից վախճանւածի թաղման ծախսը տրւում է զրամարկղից: Յետոյ դաստացւում է ձեռնարկողների դժբախտ պատահարների համար կազմւած ապահովագրական ընկերութիւնից: Ինչ օրավարձից գանձւում է անդամավճարը, ըստ այնմ էլ տրւում է օժանդակութիւնը: Օժանդակութեան չափը տարեց-տարի որոշում է զրամարկղի ընդհանուր ժողովը: Ժողովից է կախւած մերժել օժանդակութիւն տալու հիւանդանոցներում տեղաւորած բանւորներին, օժանդակութիւն չտալ տօն և կիրակի օրերի համար, տուգանքի ենթարկել կամ օժանդակութիւնից զրկել այն հիւանդներին, որոնք թերանում են կատարելու բժշկի խորհուրդներն և այլն:

### Դրամարկղների միջոցները

Հիւանդանոցային դրամարկղների նիւթական միջոցների աղբեւրներն են. 1) բանւոր և ձեռնարկող անդամների վճարներ, 2) եկամուտ դրամարկղի կայքերից, 3) օժանդակութիւն և նուէր, 4) զրամարկղի վարչութեան որոշած տուգանքներից, 5) տուգանքներ ձեռնարկողից, երբ սա թերանում է որոշ պարտականութիւնների մէջ և 6) պատահական եկամուտներ: Կապալառուներից վերցրած բանւորների համար ձեռնարկողն ինքն է տալիս պահանջւած վճարները, իրաւունք ունենալով այն գանձել այդ վերջիններից: Անդամավճարների չափը որոշում է զրամարկղի ընդհանուր ժողովը: Կա կարող է լինել օրավարձի մէկ տոկոսից մինչև երկու տոկոսը: 400-ից պակաս անդամ ունեցող զրամարկղը կարող է անդամավճարների չափը բարձրացնել մինչև երեք տոկոսի: 5 բուրլուց աւելի օրավարձ ստացողները կամ թէ տարեկան 1500 ը. ուոճիկ ունեցողները վճարում են տոկոսներ 5 բուրլու հաշւով: Զեռնարկողը վճարում է բանւորից հաւաքած գումարի երկու երրորդականը, այնպէս որ դրա-

մարկղի այս աղբիւրից գոյացած միջոցների երեք հինգերորդականը տալիս են բանւորները, իսկ երկու հինգերորդականը ձեռնարկողը։ Անդամավճարների գանձումը կատարում է ձեռնարկողը օրավարձի հատուցման ժամանակի Բանւորներից ստացւած զումարի վրայ նա աւելացնում է իրենից հասանելիքն և ներկայացնում է դրամարկղի վարչութեան։ Հիւանդաները վճարից ազատ են։ Նրանց դիմաց վճար չի տալիս նաև ձեռնարկողը։ Ժամանակին չմտցրւած զումարները գործարանային տեսչութեան կարգադրութեամբ տուգանքով հանդերձ գանձւում են ձեռնարկողից։ Դրամարկղի միջոցներից կազմում է երկու առանձին գրամագլուխ։ շրջանառու և պահեստի։ Շրջանառու գրամագլխի պաշտօնն է բաւարարութիւն տալ առօրեայ պէտքերին, իսկ պահեստի գրամագլուխը, որ կազմում է բանւորների և ձեռնարկողի վճարների հինգից մինչև տասը տոկոսից՝ նպատակ ունի գրամարկղին նեցուկ լինել անակնկաների ժամանակի։ Դրամարկղի գործարների պահպանութիւնը յանձնւում է ձեռնարկողին։ Վերջինս պարտաւոր է իր հերթին այդ գործարները պահպանել որևէ է վարկային հիմնարկութեան մէջ։

**Հիւանդանոցային դրամարկղների գործավարութիւնը**

Դրամարկղի գործերը վարում են ընդհանուր ժողով և վարչութիւնը։ Ընդհանուր ժողովը պիտի բաղկացած լինի ոչ թէ գրամարկղի բոլոր անդամներից։ այլ միայն լիազօթներից։ Թւով ոչ աւելի 100:ից։ Ըստհանուր ժողովում ձեռնարկողը ունի իր հերկայացոյիները որոնց ձայների քանակը հաւասար է բանւորական ձայների երկու երրորդականին։ Զեռնարկողը կարող է իր կողմից ներկայացնեցիչներ նշանակել կողմանի մարդկանց։ Ըստհանուր ժողովի նախագահը կամ

ձեռնարկողն է կամ նրանից նշանակւած անձն։ Ժողովները հրաւիրուում են ընդհանուր օրէնքների հիման վրայ, այսինքն նախօրօք ստացւում է իշխանութեան թոյլտութիւնը։ Վարչութիւնը պիտի բաղկանայ կենտ թիւ կողմող անդամներից։ Բանւորների կողմից ընտրւած վարչական անդամների թիւը մէկով աւելի պիտի լինի ձեռնարկողի նշանակովի անդամներից։ Դրամարկղը կարող է իր կանոնագրութեան մէջ ասել և ընդունել, որ վարչութեան նախագահը պիտի լինի ձեռնարկողը կամ նրա նշանակած անձը։ Հակառակ գէպքում նախագահն ընտրւում է վարչութեան կողմից։ Ընտրողական դրդն ներկայացնում է նահանգապահետին կամ սրան համապատասխան իշխանաւորի, որից էլ կախւած է հաստատել կամ բեկանել։ Վարչութեան անդամները պէտք է օրէնքի առաջ լինին անարատ և իրաւունքներից չըրկւած։ Վարչութեան վրայ է ընկնում գրամարկղի ողջ գործավարութիւնը։ Նա տարւայ վերջին Ապահովագրական Խորհրդին ներկայացնում է իր հաշւէտութիւնը։ Վարչութեան հաշիւները և նթարկուում են վերաստուգիչ Յանձնաժողովի քննութեան։ Այդ Յանձնաժողովը ընտրւում է ընդհանուր ժողովի կողմից։ Բացի այդ՝ վարչութեան գործավարութիւնը կարող են քննութեան ենթարկել գործարանային տեսական ապահովագրական ատեանի կարգադրութեամբ և անկախօրէն, ապա նաև նահանգապահետին իշխանութեան ցուցունքները վարչութիւնը պարտաւոր է կատարել։ Ապահովագրական ատեանը կարող է պաշտօնանակ սնեել վարչութեան նախագահին։ անդամներին իր պարտականութիւնները կատարելու պատճառով անկարող լինի գույս գալ աշխատանքի, ապա այդ հանգամանքը իրաւունք չի տալիս ձեռնարկողին տուգանքի ենթարկելու կամ հեռացնելու նրան պաշտօնից։ Վարչութեան անդամները իրենց վրայ դրած

պարտականութիւնները կատարում են անվարձ, եթէ  
այդ մասին առանձին չէ որոշւած կանոնագրութեան  
մէջ: Բանտորանդամը գագարելով զբաղւած լինել  
ձեռնարկողի մօտ, գրանով էլ գագարում է վարչու-  
թեան անդամ լինելուց: Զեռնարկողը կարող է իրան  
վերապահւած իրաւունքներից՝ թէ ընդհանուր ժողո-  
վում և թէ վարչութեան մէջ՝ չօգտիր, եթէ այդ կա-  
մենայ: Այս գէպքում գրամարկողի ամբողջ գործավա-  
րութիւնը ընկնում է բանտորութեան ձեռքը:

Մենք համարեա մանրամասն պատմեցինք օրէն-  
քի բովանդակութիւնը: Այժմ անցնենք այդ բո-  
վանդակութեան քննութեանն և ջանանք խելտուտ  
լինելու, թէ որքան է նա համապատասխան բանտոր-  
ների անխարդախ համացւած շահերին:

Օրէնքը անխտիր չի տարածում բոլոր վարձու  
աշխատաւորների վրայ: Դա օրէնքի ամենավիրաւոր  
կողմերից մէկն է: Հաշուած է, որ Ռուսաստանի 12 միլ-  
իոն բանտորութիւնից միայն 2 միլիոնը պիտի են-  
թարկի նոր օրէնքին: Մոռացութեան են տրւած գիւ-  
ղատնտեսական բանտորները, արեւորի, փոստի և հե-  
ռովզի աշխատաւորները, շինարարական (քարտաշ, հիւ-  
սըն և այլն) և ձկնորսարանների բանտորներն և այլն: Օրէնքը մի առանձին բարեկամական գուրգուրանք է ցոյց  
տալիս մօնք ձեռնարկութիւններին: Շարժիչ չկայ գոր-  
ծարանում, երեսուն բանտորից աւելի չես զբաղեցնում  
և դուազատ ես օրէնքից: Մանք ձեռնարկութիւնների մէջ  
տիրող անպատկառ շահագործութեան հետ բանտորնե-  
րը լաւ են ծանօթ և միթէ բանտորների կեանքի գնով  
պիտի նրանք բարգաւաճեն ու ճոխանան: Կան խա-  
նութներ, որոնք շարժիչ չունին, բայց զբաղեցնում են  
տասնեակ գործակատարներ: Հիմա արի ու ասի, որ  
մանք ձեռնարկութիւն է և նա անկարող է ծախքեր

անել հիւանդութեան դէպքում ամոքելու իր ծառայողի  
ծանր վիճակը: Բայց այդ խանութը միլօնների շրջա-  
նառութիւն ունի, իսկ նրա տէրերը հազարներ են շը-  
պրառում իրենց քմահաճոյքների համեմատ:

Յետոյնիւթական օժանդակութեան և բժշկական օգնու-  
թեան գործը չպիտի զատել իրարից, այլ կենտրոնացնել  
բանտորների ինքնավար կազմակերպութիւնների ձեռ-  
քում, բարդելով ողջ ծախքը ձեռնարկողների և պետական  
գանձարանի վրայ: Բանտորների ապահովագրութիւնը  
ընդհանուր կուտուրական գործ է և ձեռնառու ողջ մարդ-  
կային ցեղի համար: Խելնրանց լզարիկ եկամուտից այս

կամ այն գումարը նորից նրանց վերազարձնելուն պատա-  
կով և այն էլ խոզած մի մասով գործավարութեան  
համար—գա ինչ մի ապահովութիւն է: Դա միայն  
ցոյց է տալիս, որ պետութիւնը կամենում է ինամա-

կալել բանտորներին, որ նրանք իրենց ստացածը «վատ-  
նեն շայլօրէն»: Իսկ այն գումարը, որ բարգում է  
ձեռնարկողների վրայ—գա էլ մի նպատակ ունի,—ընդ-  
գծել բանտորների առջև նրանց բարեկամական վերա-  
բերմունքն ու խնամքը: Ոչ, ձեռնարկողները, տալով

այս կամ այն գումարը, չպիտի գան նստեն բանտոր-  
ների զլիին և զեկավարեն նրանց հարազատ գործերը:  
Ապահովագրական գործը միմիայն պիտի լինի բանտոր-  
ների ձեռքին: Օրէնքը բերել է գործին խառնել և ձեռ-  
նարկողներին, բայց օրէնքը թոյլատրում է, որ ձեռ-

նարկողը հրաժարել իր վարչական մամնակցութիւնից  
Ուրիշն բանտորների եռանդից և կազմակերպ վիճակից  
է կախւած այնպէս տանելու գործը, որ ձեռնարկողը  
ինքնայօժար տեղի տայ և բանտորներին թողնէ մտա-  
հոգելու սեպհական ցաւերի մասին: Օրէնքը, ինչպէս

տեսանք, պետութեան վրայ ոչ մի ծախս չի բարդում  
և միայն յանձնում է նրան նսկողի ու զեկավարողի  
գիր: Ծախքերը պիտի քաշեն ձեռնարկողներն ու բան-

տորները: Բայց կան վարեր, ուր, ինչպէս Յագուամ



ձեռնարկողներն այժմ ոչ միայն հիւանդներին հասցնում են ձրի բժշկութիւն, այլ և տալիս են դրամական օժանդակութիւն։ Արդ՝ ներկայ օրէնքը գալիս է ոչ թէ ապահովագրելու բանւորներին, այլ ձեռնարկողներին, որովհետեւ, եթէ նա կեանքի մէջ մացնաին ձեռնարկողները դրամական օժանդակութեան խոշոր մասը պիտի բարդեն բանւորների շինքին։ Նորից կրկնում ենք, բանւորների եռանդից և կազմակերպ վիճակից է կախւած, որ Բագրում, օրինակ, հիմնւի այնպիսի դրամարկութիւն ծախքերը քաշեն ամբողջովին ձեռնարկողներն, իսկ Կարգադրիչները լինեն բանւորները։

Օրէնքը ճանաչում է միայն գործարանային դրամարկողներ և որոշ գեպքերում թոյլ է տալիս նըրանց միացումը։ Մյու արւած է նրա համար, որ իր թէ դրամարկողները մօտ լինին բանւորներին։ Բայց դա մի խաղ է, խարուսիկ զրոյց։

Ուղղակի պարզ է օրէնքի նպատակը՝ բանւորներին միշտ պահել ձեռնարկողների հսկողութեան տակ։ Մյու աւելի ակնյատնի է դառնում, երբ ծանօթանում ենք դրամարկողի վարչական կազմի հետ, ընդհանուր ժողովի նախագահը նշանակում է ձեռնարկողի կողմից, նա ունի իր նշանակովի անդամներն ընդհանուր ժողովի և վարչութեան մէջ, դրամարկողի միջոցները յանձնում են ձեռնարկողի պահպանութեանն, դրամարկողի ընդհանուր ժողովները թոյլատրում են իշխանութիւնից, ուր, ինարկէ, ներկայ պիտի լինի և ոստիկանութեան ներկայացուցիչը։ Միթէ այստեղ բոլորը նպատակ չունի բանւորների գլխին խնամակալ կարգելու ձեռնարկողին և նրան յանձնելու այծերին ոչխարներից ջոկելու հոգատարութիւնը։ Եթէ որևէ է բանւոր, զրկելով պաշտօնից՝ զրկում է և զրամարկողի անդամակցութիւնից, պատահ և անդիւրեկան քիթ ու պառնգ ունեցող բանւորը միշտ էլ հեռու կլինի դրամարկողի գործերից։ Խօսքս բառացի չհասկանաք։ Ուզում եմ ասել, որ ձեռ-

նարկողի գիւղիւկով պար չեկող բանւորն, այսինք բանւորներին չդաւաճանող բանւորը, հեռու կլինի դրամարկողի գործերից։ Ո՞վ կը տուժէ։ Հարկաւ բանւորութիւնը։ Ինչու չեն ստեղծւում տեղական դրամարկողներ, որ իրենց մէջ ամփոփեն ողջ բանւորութիւնն և նրանց բաժան-բաժան չանեն ըստ զանազան ձեռնարկութիւնների։ Լաւ չէր լինի, որ բանւորը կապւած լինէր մի վայրի կամ արդիւնաբերութեան մի ձիւղի ընդհանուր դրամարկողի հետ և այստեղ կամ այնտեղ աշխատելու պատճառով զրկած չինէր իր գործին հետեւ և մասնակցելու նարաւորութիւնից։ Ի՞նը կէ, այդպէս լաւ կլիներ, Բայց այն ժամանակ բանւորները կսովորէին շիւել միմիանց հետ, իրազեկ լինել իրար վիճակի, ապա և կստեղծւէր բանւորական ընդհանուր շահերի մմնուրդ, ընդհանուր կազմակերպութիւն, մի բան, որ ձեռնուու չէ շահագործողներին։ Բաժանէր, որ տիրես, — ահա նրանց նշանաբանը, բաժանիք և ամենուրեք ունեցիք ըստ մարզը, որի աչքից չը վրիպէ բանւորների և ոչ մի քայլը, — ահա նրանց նպատակը, եւ քանի որ այդպէս է, — գործարանային դրամարկողները կը գաւանան հալածանքի և խարութեան վայր այլ կերպ մտածողների համար։ Այստեղ կը թագաւորէ ձեռնարկողների կամքը։ Նորից ու նորից կրկնում ենք, բանւորներից է կախւած, որ շտկէ օրէնքի այդ պակասաւոր կէտը ևս։ Օրէնքը թոյլ է տալիս, որ մի քանի դրամարկողներ միանան իրար հետ։ Ուրեմն պիտի աշխատել, որ միանան մի վայրի բոլոր զրամարկողները, օրինակ, Բագրում դա ամենահեշտ իրագործելի մի բան է։ Այստեղի բանւորութիւնը կենտրոնացած է մի չափազանց նեղ հորիզոնի տակ, արդիւնաբերութեան միւնոյն ձիւղում, այդ բանւորութիւնն օգտառում է միւնոյն հիւանդանոցներից, մնում է, որ նա օժանդակութիւն ստանայ և միւնոյն ընդհանուր դրամարկողից։ Օժանդակութեան չափի մէջ էլ նկատում է նոյն խը-

տրական ոգին: Նախ որ արդարացի չէ հիւանդ բան-  
տրին զրկել իր ամբողջ աշխատավարձից: Տալով նրան  
զրա մի մասը, մէկին կէսը միւսին քառորդը՝ զրա-  
նով դուռն է բացւում դժգոհութեան և անհամաձայնու-  
թեան: Բանւորներին այդպիսով զինում են միմիանց  
դէմ: Ինչու է մոռացւում, որ հիւանդը կարօտ է աւե-  
լի լաւ խնամքի, ինչու է խուզւում նրա օրավարձը և,  
վերջապէս, դա ի՞նչ կանոն է, որ մարդիկ հաւասար  
վճարներ են տալիս, բայց հաւասարապէս չեն օգտառում  
իրենց կրած ծախքերից, Կառավարութիւնը օրէնքի  
քննութեան ժամանակ դրան տեղ է այն պատասխանը,  
թէ դրամարկղի միջոցները կազմուում են և ծ և ո՞ն ար-  
կողների գնարներից, ուստի ամուրիներն իրա-  
ւունք չունին դժգոհելու: Ինչու, ձեռնարկողը գոյու-  
թիւն ունի միայն ամուսնացածների համար, ինչու  
այդ ձեռնարկողի հարստութիւնը գիզուում է միմիայն  
ամուսնացածների ջանքերով: Փաստ է նոյնիսկ, որ  
ամուսնացածներին յանախ դժւարութեամբ են գործի  
ընդունում (օր. Բագւում): Ուրիշն այսուեղ մի շուն էլ  
է թաղւած. օրէնքը օժանդակութիւն է ընդունում  
օրավարձի կէսը, բայց իրականութեան մէջ բանւոր-  
ները կստանան մի քառորդը: Մնում է, որ գրամարկղ-  
ների ընդհանուր ժոկովները շտկեն այդ ծուռ կողմը,  
որ կայ օրէնքի մէջ: Դրա հսմար էլ ընդահանուր ժո-  
ղովները պիտի լինին գիտա կից բանւորների ժողով-  
ներ:

Օրէնքը դրամարկղների վրայ բարզում է և այն  
օժանդակութիւնն, որ այժմ 1903 թ. յունիսի 2 ի օ-  
րէնքով հաշմանդամներին, վասաւած բանւորներին  
վճարում են ձեռնարկողները: Այդ օժանդակութիւնը  
պիտի վճարի 13 շաբաթ: Կառավարութիւնն էլի տ-  
սել է, որ բանւորներն իրաւունք չունին դժգոհելու,  
քանի որ ձեռնարկողներն էլ են վճարներ տալիս:  
Բայց հետաքրքիր է իմանալ, քանի տնդամ պիտի

շահագործւի այդ չարաբաստիկ փաստը: Ամուսնացող-  
ներն արտօնուում են աւել ստանալու, որովհետեւ ձեռ-  
նարկողները նոյզնէս զրամ են տալիս: Հաշմանդամ-  
ների օժանդակութիւնն էլ զրանով է արդարացնուում...  
Աւելի լաւ չէր լինի, որ ձեռնարկողները փոխանակ  
շահագործելու իրենց տւած «ողորուութիւնը»՝ զրա-  
մարկղների բոլոր ծախքերը վերցնէին իրենց  
վրայ: Դա արդարացի կլինէր բանւորների դիմաց  
և այն ժամանակ տրամարանական էլ կըլինէր,  
որ ձեռնարկողներն իրենց ուզած ծախքերը  
բարդէին զրամարկղների վրայ: Էլ չենք ծանրանում  
օրէնքի մնացած վիրաւոր կէտերի վրայ: Աչքարաց  
ընթերցողը հէնց միայն նրա բովանդակութեան հասա-  
լակ ընթերցումից կը նկատէ, թէ որքան է այդ օրէն-  
քը պակասաւոր և միակողմանի, թէ որքան է բարգա-  
ցրած այն հասարակ գործը, որ հիւանդ բանւորը նիւ-  
թական օժանդակութիւն ստանալու իրաւունք ունի:

Այժմ դառնանք օրէնքի բժշկական օգնութեան  
մասին խօսող կէտերին: Ինչպէս յայտնի է, ձեռնար-  
կողները 1866 թ. օգոստոսի 26-ի ժամանակաւոր օ-  
րէնքով պարտաւոր են բժշկական օգնութիւն հացնել  
իրենց բանւորներին: Ըստ էութեան օրէնքը նոր փո-  
փոխութիւն չի մացնում: Նորից յիշեցնում է ձեռնար-  
կողներին նրանց պարտականութիւնների մասին և նո-  
րից բժշկական գործը յանձնում է նրանց խնամքին,  
Զեռնարկողները չեն կամեցել բժշկական օգնութեան  
գործը յանձնել հիւանդանոցային դրամարկղներին:  
Նրանք յայտարարել են, որ հին օրէնքի շնորհիւ իրենք  
այժմ հիւանդանոցների և այլ բժշկական գործերի հետ  
առնչութիւն ունեցող կայքերի տէր են և այդ կայքերը  
չեն կարող յանձնել դրամարկղներին, որովհետև «վեր-  
ջիններս յաճախ անկարող կլինին պահպանել բանւոր-  
ների բժշկութիւնը հարկաւոր բարձրութեան վրայ»:  
Միթէ աչքարկապութիւն չէ այս յայտարարութիւնը:

Զեռնարկողները լաւ են խնամում հիւանդ՝ բանւորներին, իսկ բանւորները «անկարող կը լինեն» խնամել իրենց ընկերներն, այսինքն իրենք իրենց Պարզէ թէ ինչումն է ձեռնարկողների փորացաւը: Նրանք չեն, կամինում, որ բանւորները ձեռնարկողների քսակի կարգագրիչները լինեն:

Միթէ կարիք կայ բացատրելու, որ իրենք ձեռնարկողներն ոչ բժիշկ են, ոչ բժշկական գործի մասնագիտներ: Բժշկական օգնութեան գործը կատարում է վարձու մարդկանց ձեռքով: Եթէ նրանց կարող են վարձել ձեռնարկողները, միթէ այդ անկարող կլինին անելու բանւորները: Բանւորները՝ շահագրգուած լինելով գործի յաջողութեան մէջ՝ կը վարձեն նոյնիսկ լաւերին: Բանն էլ հէնց նրանումն է, որ լոււին լաւ դրամ պիտի տաս, իսկ ձեռնարկողին, որ ծախքեր քաշողն է, գրանից ինչ օգուտ:

Ահա այս է նոր օրէնքը իր զլիւաւոր կողմիրով: Պիտի այն ընդունել և շակել նրա ծոռութիւնը գործնական կեանքում, իսկ շտկովը պիտի լինի գիտակից բանւորը:

### 3.

Թէ ԻՆՉՊԻՍԻ ԴՐԱՄԱՐԿԴ Է ՀԱՐԿԱԽՈՐ ԲԱԳԻԻ  
ԲԱՆԻՈՒՆԵՐԻՆ

Մենք ծանօթացանք այն բանին, թէ ինչպէս է օրէնքը ապահովագրում բանւորներին հիւանդութիւնից: Դրա համար նա հիւանդանոցային դրամարկղներ է հիմում: Ամեն հիւանդանոցային դրամարկղ իր առանձին կանոնագրութիւնը պիտի ունենայ, որը պիտի արտայտէ օրէնքի ներքին իմաստը: Օրէնքի մէջ ասւած է, թէ Ապահովագրական խորհրդը կը հարտարակէ օրինակելի մի կանոնագրութիւն, որը կամ կարողէ ամբողջովին ընդունել այս կամ այն ձեռնար-

կութեան մէջ կամ թէ նա կըծառայէ օրինակ, որի երեսով կըկազմւին ցանկալի կանոնագրութիւնները: Այս վերջին հանգամանքում թէ ձեռնարկողը (գործարանատէրը) և թէ բանւորները իրաւունք ունին փոփոխութիւններ մացնել կանոնագրութեան մէջ: օրէնքից վերցնել այն, ինչ ցանկալի է, մերժել այն, ինչ ցանկալի չէ: Օրէնքով կանոնագրութիւնը կազմում է ձեռնարկողը (յօդուած-28), բայց մինչև նրա հաստատութեան առաջարկելը նա պարտաւոր է լսել բանւորների ընտրած լիազօրների կարծիքը: Այստեղ բանւորները կարող են պահանջել և առաջարկել, որ ուղղումներ մացնեն գործարանատէրի կազմած կանոնագրութեան մէջ, իհարկէ, այնպիսի ուղղումներ, որոնք ձեռնատու են բանւոր դասակարգին:

Եւ եթէ Բագուում սկսի ապահովագրական օրէնքների գործագրութիւնը՝ նման եղանակով են կազմելու հիւանդանոցային դրամարկղների կանոնագրութիւնները: Բագւի բանւորները պատրաստ պիտի լինեն, որ օրէնքի իրենց համար ձեռնտու կէտերը տեղ գտնեն կանոնագրութիւնների մէջ: Դրա համար նրանք պարզ հասկացողութիւն պիտի ունենան այդ ձեռնտու կէտերի մասին: Ահա այդ նպատակով Բագւի առաջաւոր բանւորները մի օրինակելի կանոնագրութիւն են կազմել և հրատարակել: Մենք այստեղ առաջ կըրերէնք այդ կանոնագրութեան գլխաւոր կէտերը, Դըրանք կէտեր են, որ եթէ ընդունելին գործարանատէրերի կողմից, ապա կարելի կըլինի ասել, թէ բանւորները կունենան բաւականին գոհացուցիչ ապահովագրութիւն հիւանդութիւնից: Արդ՝ որոնք են Բագւի առաջաւոր և գիտակից բանւորների կազմած կանոնագրութեան այդ ցանկալի կէտերը, որոնք թէ հակառակ չեն օրէնքի ոգուն և թէ ձեռնտու են բանւորութեան համար: Այդ կէտերը հետեւաներն են:

1. Ամբողջ Բագւի արդիւնաբերական բայօնի հա-

մար հիմնել մի ընդհանուր հիւանդանոցային դրամարկղ, որի գլխաւոր վարչութիւնը կըլինի Բազւում, իսկ մասնաճիւղերը — Սարունչիւում, Բիրի-Հէյրաթում և Սևաղաքում:

2. Դրամարկղին մասնակցումին այն բոլոր գործարտները, որոնց մէջ զբաղւած են 10 և աւելի բանուոր:

3. Դրամարկղին անդամակցում են ոչ միայն ոռուսահպատակ բանւորները, այլ և օտար անպատակ:

4. Բագրի ընդհանուր հիւանդանոցային դրամարկղը իր վրայ է վերցնում բշխական օգնութեան գործը:

5. Այդ նպատակի համար անհրաժեշտ ծախքերը նա ստանում է ձեռնարկողներից, քանի որ օրէնքով նըրքանց պարտքն է ձրիապէս բժշկել հիւանդ բանւորներին:

6. Դրամարկղը միջոցներ է ձեռք տոնում առողջապահիկ պայմաններ ստեղծելու թէ բանւորների բնակավայրերում և թէ նրանց աշխատանքի տեղերում: Դրա համար նա իրաւոնք ունի զբաղւել լուսաւորչական գործով, այսինքն գրքեր, թոռուցիկներ և թերթեր հրատարակել, դասախոսութիւններ կազմակերպել, սինեմատոգրաֆներ բանալ, ուսումնասիրել իր ամդամների աշխատանքի և բնակարանային պայմանները, մասնակցել զանազան համագումարների, ապա էժան բնակարաններ շինել կամ թէ աջակցել նման նպատակով եղած ձեռնարկութիւններին:

7. Դրամարկղը բժշկական օգնութիւն է հասցնում ոչ միայն իր անդամներին, այլ և նրանց ընտանիքներին:

8. Դրամարկղը նիւթական օժանդակութիւն է տալիս իր անդամին նաև այն դէպքում, եթէ հիւանդանում է նրա ընտանիքի որևէ անդամը (կինը, երեխան, մայրը և այլն):

9. Դրամարկան օժանդակութիւն դրամարկղի անդամը պտանում է հիւնդանդութեան առաջին իսկ օրից և օրէնքի նշանակած բարձր չափերով, այսինքն ամուսնացածը իր օրավարձի հրկու երրորդականը, ամուրին կէնը և այլն:

10. Հաշմանդամների ստացած օժանդակութիւնը յիշ է ստացւում ձեռնարկողից կամ համապատասխան Ապահովագրական ընկերութիւնից:

11. Դրամարկղի միջոցները կազմւում են բանւորների անդամավճարներից և ձեռնարկողների նըրքանտաներից, սակայն այն փիրմանհրում, ուր այժմ բանւորները իրենց հիւանդութեան ժամանակ օժանդակութիւն են ստանում ձեռնարկողներից — նրանք (այսինքն բանւորները) անդամավճարներ չեն տալիս և դրամարկղի պահանջած բոլոր ծախքերը ընկնում են ձեռնարկողների վրայ:

12. Բանւորական անդամավճարների քանակը ընդունում է բարձր չափավ, այսինքն նրանց աշխատավարձի երկու տոկոսը:

13. Աշխատավարձի մէջ են մտնում բոլոր կարգի վճարները, զուտ օրավարձը, արտականոն աշխատանքների գիմաց եղած վճարները, բնակարանավարձը, նուէրները, ճաջի գինը և այլն և այլն:

14. Դրամարկղը կառավարուում է ընդհանուր ժողովի և վարչութեան միջոցով, որոնց բոլոր անդամները ընտրում են բանւորների կողմից: Ձեռնարկողները ինքնայօթար հրաժարումնեն մասնակցելու դրամարկղի գործավարութեանն ու կառավարութեանը:

15. Դրամարկղը իր բոլոր ժողովներին և նիստերին կարող է հրաւիրել իրազեկ անձանց և լսել նրանց կարծիքներն ու ցուցմունքները: Իրազեկ անձինք օգտառում են խորհրդակցական ձայնով: Դրամարկղի վարչութեան առաջարկութեամբ Բագրի Ապահովագրական ատեանը լսում է այդ իրազեկների կարծիքը, հրաժարելով

Նրանց մասնակցելու իր նիստերին:

16. Դրամարկղը գործարաններում ունի իր լիազօրները, որոնց միջոցով իրավուրծում է կառավարութեան գործը:

17. Թէ ընդհանուր ժողովներում և վարչութեան նիստերին կարող են մասնակցել նաև անդամների անձնափոխանորդները, որոնք օգտառում են խորհրդակցական ձայնով, իսկ անդամների բացակայութեան ժամանակ վճռական ձայնով:

18. Ընդհանուր ժողովներ լինում են ամիսը մի անգամ: Արտակարգ ժողովներ վարչութեան կամ վերաստուգիչ յանձնաժողովի որոշումով կամ թէ ոչ պակաս 25 լիազօրի պահանջմամբ:

19. Ընդհանուր ժողովը բաղկացած է 100 լիազօրից և այդքան էլ անձնափոխանորդներից: Վարչութիւնը 24 անդամից և նոյնչափ անձնափոխանորդներից:

20. Թէ դրամարկղի ժողովներում և թէ նրա գործավարութեան մէջ բոլոր լեզուները դորձածելի են:

—

Ահա այն զլիասոր կէտերը, որոնք եթէ մտցնեին թագւի դրամարկղի կանոնադրութեան մէջ, ապա հնարաւոր կրինի ասել, թէ բանուրները՝ ստանում են լուրջ ապահովագրութիւն: Առաջաւոր բանուրները իրենց մշակած կանոնադրութեան մէջ ուրիշ շատ կէտեր ունին դրած, որոնք նոյնպէս չափազանց կարեոր են: Մնում է, որ բանուրները խորին ուշագրութիւն դարձնեն այդ ամբողջ կանոնագրութեան վրայ և ձեռնարկողների առաջ պաշտպանեն, թէ այստեղ հրտասարարած կէտերը և թէ ամբողջ կանոնադրութիւնը: Հասկանալի է, որ դա պիտի լինի համերաշխութեամբ և կազմակերպչած եղանակով:

4.

Թէ Ինչպէս զիջի բԱՆԿՈՐՆԵՐԸ ԾՊԵՀՈՎԸԳՐԻՒԵՆ ԴՓԲԱԽԾ  
ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

(1912 թ. յունիսի 23-ի օրէնքի լուսաբանութիւնն ու  
ընտութիւնը):

Յուն օրէնքի բացատրութեան անցնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում պարզել, թէ ինչ է նշանակում գժրախտ պատահար: Դժրախտ պատահարը ձիշտ որ պատահար է: Դա անսպասելի և յանկարծ պատահած մի անակնկալ է, որ աշխատանքի կանգնած բանուրին զրկում է մարմնի որևէ պահամից, գալիս է մի հարուածով խանգարելու նրա առողջութիւնը, ապա և զրկելու նրան աշխատաբնդունակութիւնից, վերջապէս, նոյնիսկ կտրում է նրա կեանքի թելը: Պէտք է զատել վնասը՝ գժրախտ պատահարից (несчастный случай) և վնասը արհեստի հիւանդութիւնից (профессиональная болезнь): Օրինակ մի զրաշար կարող է տպարանի հեղձուկ մթնոլորդում տարիներով շնչել կապարի փոշին և, որպէս հետեանք այդ պայմանների, քայրայել իր կուրծքը, դառնանալ թոքախտաւոր, աշխատանքի անընդունակ: Կուլտուրական երկրներում (Ֆերմանիա, Աւստրիա) կայ բանուրների ապահովագրումն և այդ կարգի հիւանդութիւններից, որ կոչում է ապահովագրումն անդամալութիւնից (ИНВАЛИДНОСТЬ):

Մուսաստանը այդ ապահովագրումն չի ճանառում: Մեզ մօտ դեռ անխախտ է այն կացութիւնը, թէ բանուրն էլ մի մեքենայ է, երբ մաշւում է, ուն է շպրտում անխնայ: Բայց մեզ մօտ գժրախտ պատահարներից վնասածները, այսպէս կոչւած հաշմանդարները առաջ և այժմ էլ քանի զեռ կեանքի չէ կոչւած 1912 թ. յունիսի 23-ի օրէնքը) իրենց ա-

ոռղջական կորուստի փոխարէն հատուցումն էին ստանում ձեռնարկողներից 1903 թ. յունիսի 2-ի օրէնքով։ Այդ բացառութիւնը երկի նրա համար է, որ գժբախտ պատահար ասածդ չափազանց աչք ծակող երեսյթ է։ Եւ իրաւ Այս ժամանակ, երբ, արհեստի հիւանդութեան դէպքում, կարելի է ասել, թէ գժուար է պայքարել բնութեան և ձախորդութեան դէմ և դրանով ճանապարհ դնել անդիտակից բանւորին, — այդ միւնոյնն անկարելի կլինի կրկնել և դրանով անկարելի է մխիթարել անդիտակիցներից անդիտակցին, երբ նա զած է դառնում գժբախտ պատահարին։ Դժբախտ պատահարն ինքը ծառացնում է իր դէմ նոյնիսկ անբարեառ բանւորին։

«Դու, ձեռնարկող, որ հիմնել ես այս գործարանն իմ յաւելեալ աշխատանքով ուռանալու, դու, որ շարել ես այսքան բարդ մեքենաներ, դու, որ հրամայում ես ինձ գետնի խորքը իշխելու կամ հսկայ շինութիւնների ծայրին թառած աշխատելու, — դու պիտի իմանա՞ որ այդ աշխատանքը կատած է ոչ միայն նեղութիւնների հետ (այդ նեղութիւնների համար ես վաճառել իմ և դու գնել ես իմ բանւորական ոյժը), այլև այնպիսի պատահարների, որ ես մի ակընթարթում կարող իմ զրկւել կիանքից կամ կորցնել մարմախ որկ է անդամն և դառնալ անընդունակ օգտակար տշխատանքի։ Դու գիտես, որ այսուհետեւ ես շուկայում էլ զին չունիմ կամ զինս իշնում է. ազա ուրեմն դու պարտաւոր ես քո ձեռնարկութեան շահի գոնձողը լինել միայն, այլև նրա մէջ պատահած գժբախտութիւնների պատասխանատուն»։

Ձեռնարկողի պատասխանաւութիւնը գժբախտ պատահարների զիմաց իր հիմքն ունի բուրժուական հասարակակարգի այս այրութենական համարւած ճշշմարտութիւնը, թէ մտանաւոր սեփականութիւնը սուրբ է և անձեռնըմիելի։

Բանւորների ոյժը, որ առեսուրի առարկայ է դարձել, նրանց միակ սեփականութիւնն է, ուստի և այդ սեփականութեան վաանգումը պիտի բաւարարւ վտանգողի կողմից, ինչպէս առհասարակ բաւարուում է բուրժուական հասարակակարգի մէջ վտանգուած սեփականութիւնը։ Այժմ անցնենք նոր օրէնքի մանրամասնութիւններին։

Օրէնքին ենթարկուող ձեռնարկութիւնը պիտի ունինայ շարժիչ և զարգեցնէ 20 րոմեոր, կոմ թէ 30 բանւոր առանց շարժիչի։ Օրէնքը չի տարածւում գանձարանի ձեռնարկութիւնների, գիւղատնեսական, առեսորի և տրանսպորտի, շինարարական և այլն բանւորների վրայ։ Հաշմանգամ բանւորի դիմաց պատասխանատու է ոչ թէ ձեռնարկողն առանձնապէս, այլն ձեռնարկողներից կազմւած ապահովագրական ընկերութիւնը։

Այդ պատասխանաւութիւնից ապահովագրական ընկերութիւնն ազատաւում է միմիայն այն դէպում, եթէ հաստատում է, որ գժբախտութիւնը բանւորի հետ պատահել է նրա չարամտութեան պատճառով։ Դրա հաստատութեան հոգմն էլ ընկնում է ընկերութեան վրայ։ Ձեռնարկողը՝ զործերը կազմաւուի յանձնելով, դրաձեալ ինքն է մնում պատասխանատուն։ Եղած ծախքերը նա կարող է ստանալ կապալառուից։ Օրէնքը չի ընդունում որևէ նախնական պայմանագիր՝ թուլացնող կամ զրկող բանւորին իրաւունքներից։ Դժբախտ պատահարից վնասածների բժշկութիւնն ամրողջովին ընկնում է ձեռնարկողների վրայ։ Եթէ վնասածը հրաժարւում է բժշկութիւնից, ապա պահովագրական ընկերութիւնը իրաւունք ունի զրկել նրան ամրոջովին կամ մասմբ։ օժանդակութիւնից կամ կենսաթոշակից, Վիրաբուժական օգնութիւնից հրաժարւելը չի համարւում

մերժումն բժշկւելու, Եթէ վնասւածին չի տրւել ձրի բժշկութիւն, ապա ընկերութիւնը պարտաւոր է որոշ սակագնավ հատուցանել նրա բժշկական ծախքերը: Դժբախտ պատահարներից վնասւածներին վարձատրութիւն տրւում է օժանդակութեան և կենսաթոշակի ձեռվ: Օժանդրկութիւն (ոօօօօօ) նրանք ստանում են 13 շաբաթւայ ընթացքում հիւանդանոցային զրամարկղներից: Օժանդակութեան չափը հաւասար է աշխատավարձի երկու երրորդականին: Կենսաթոշ (ոօօօօթ) տրւում է կամ աշխատանքի կատարեալ անընդունակութեան կամ թէ այդ ընդունակութեան մի մասը կորցնելու գէպքում: Առաջին գէպքում կենսաթոշակը հաւասար է աշխատավարձի երկու երրորդականին, իսկ երկրորդ գէպքում կենսաթոշակի չափը հաշւում է կորուսաի համեմատ:

Փոքրահասակների կենսաթոշակի չափը համեմատ նրանց մեծանալուն, բարձրացնելում է մինչև հասարակ բանուորի միջին աշխատավարձը: Վնասւած բանուորի մահւան գէպքում, եթէ մահը տեղի է ունեցել անմիջապէս պատահարից յետոյ, կամ բժշկութեան ընթացքում, ապահովագրական ընկերութիւնը պարտաւոր է վճարել թաղման ծախքերը, վախճանածի քսանօրեայ — երեսնօրեայ օրավարձին հաւասար: Ընկերութիւնը պարտաւոր է կենսաթոշակ կարգի վախճանաւածի կնոջ, երեխաններին և մերձաւոր ազգականներին, եթէ վիրջիններիս կերպողը եղել է դժբախտացածը: Կենսաթոշակը հաշւում է հետեւեալ կերպով: օրւայ աշխատավարձին աւելացնելում է նրա տասից մինչև քսան տոկոսը, եթէ բանուորն օգտւել է ձեռնարկողի բնակարանից կամ ստացել է բնակարանավարձ, զբան աւելացնելում է և ճաշշի արժէքը, եթէ բանուորը ճաշն ստացել է ձեռնարկողից, ապա ի նկատի է առնելում — եթէ կայ այդպիսի պայման, — և ձեռնարկութեան գուտ օգտի բանուորական

բաժինը, և յետոյ այդ ստացւած դումարի երկու երրորդականը բազմապատկումէ 280-ի վրայ: (Այս վերջին թիւը տարրուայ օրերի թիւն է, պակաս իսկականից 85 օրով):

Այդ գէպքում, եթէ վնասւածը ամբողջովին կորցրել է իր աշխատաընդունակութիւնը, ստացած գումարը կը լինի նրա կենսաթոշակի քանակը, իսկ եթէ վնասի կորուսը մասնակի է, (օր. աշխատաընդունակութեան 10 տոկոսը, 15 տոկոսը և այլն), ապա կենսաթոշակը հաշւում է դրա համեմատ, նուազ չափով:

Այս կերպ հաշւում է այն վնասւած բանուորների կենսաթոշակը, որոնք աշխատում են ողջ տարին բանող ձեռնարկութեան մէջ կամ թէ նրանց մէջ միենոյն զբաղմունքով աշխատում են ամբոջ տարին:

Եթէ չկան այդ պայմանները, ապա փոխում է կենսաթոշակի հաշւումի եղանակը: Օրինակ, մի փականագործ, որ ստանում է օրական 2 ր. զբաղմունք է գտել այնպիսի գործարանում, որը բանում է տարւայ մէջ միայն 6 ամիս: Եթէ այդ բանուը է վեց, նրա կենսաթոշակը կը հաշւի այնպէս, որ նա վեց ամսւայ համար ստանայ վարձատրութիւն 2 ըուբլուց, իսկ մնացած վեց ամսւայ դիմաց համեմատ: Ապա մի այլ հանրակ մշակի օրավարձի համեմատ: Ապա մի այլ հասարականագործը տարւայ ընթացքում վեց ամիս զբաղւում է իր արհեստով, մնացած վեց ամիսը նա վերադառնում է գիւղը՝ իր գիւղատնտեսական աշխատանքները կատարելու եթէ նա վնասւեց՝ կը ստանայ կենսաթոշակ առաջին եղանակով: Վեց ամսւայ դիմաց՝ 2 ըուբլուց, իսկ մնացածը՝ հասարակ մշակի օրավարձի համեմատ: Այս նրբութիւնն օբչնքի մէջ մացրւած է Պետական Խորհրդի կողմից: Դա մի գտանդաւոր կէտ է բանուորների գէմ, որ մի անգուղակի գրկում է նրանց, միւս տեղ ստիպում

ամուր կպչել որե է գործարանի, սպառնալով, հակառակ դէպքում, զրկել նրանց շօշափելի օգնութիւնից: Կողմերի բանուրի և ապահովագրական ընկերութեան—համաձայնութեամբ կենսաթոշակը կարելի է փոխարինել միանուագ վարձատրութիւնով, այն է 10 տարւայ կենսաթոշակի վճարումով: Սակայն դա թոյլատրում է մանր կորուստների և կենսաթոշակների նկատմամբ, երբ աշխատաբնդունակութեան կորուստը բարձր չէ 15 տոկոսից, իսկ տարեկան իենսաթոշակը 36 լուրուց:

Եթե կենսաթոշակ ստացող հաշմանդամ բանորը վնասում է՝ ապա նրա աշխատաբնդունակութեան կորուստը էլ չի հաշում 100 տոկոսից, այլ այն նուազ չափից, որը դրյութիւն ունի նման բանուրի մէջ, թէն նա իր պակասաւոր կողմով հանդերձ ընտելացած և համակերպւած լինի կատարելու առողջ մարդու աշխատանք: 1903 թ. յունիսի 2-ի օրէնքում այս կէտը գոյութիւն չուներ: Հին օրէնքով, եթէ բանուրը երկրորդ անգամ վնասում էր, նրա աշխատաբնդունակութեան կորուստի որոշման ժամանակ նկատի չէր տոնուստ, թէ նա պակաս ընդհանուր կութիւնների տէր է եղել. այդպիսի բանուրը նկատում էր, որպէս կատարեալ աշխատաբնդունակ եղած և իրրե նոր վնասած, ուստի և նոր վնասը հաշում էր 100 տոկոսից: Նոր օրէնքը այս կէտում խմբագրւած է ի վնաս բանուրների:

Երեք տարւայ ընթացքում, սկսած կենսաթոշակի նշանակումից, կողմերն իրաւոնք ունին դիմելու նորից բժշկական ըննութեան հաւաստիանալու, թէ փոփոխութիւն չի կատարել հաշմանդամի առաջնութեան մէջ: Այդպիսի բժշկական կրկնաբննութեան կարելի է դիմել տարին մի անգամ: Բժշկական նոր ըննութեան արդինքը հիմք է ծառայում: ըստ նոր տուետների փոփոխել կենսաթոշակի չափը: Հաշմանդամը ստացած վնասի համար մինչեւ երկու տարին չի

կորցնում իրաւունքը պահանջ առաջարկելու: Եթր վնասուած բանուրի առողջութիւնը՝ բժշկական միջոցներ գործադրելուց յետոյ՝ ստանում է կայուն գրութիւն, ապահովագրական ընկերութիւնը նշանակում է նրան կենսաթոշակ՝ աշխատաբնդունակութեան կորուստի համեմատ: Հաշմանդամն անձամբ կամ լիազօրի միջոցով կարող է պաշտպանել իր շահերն ընդորի միջոցով կարող է պաշտպանել իր շահերն ընկերութեան առաջ: Միմիայն գրանից յետով, եթէ նա դժգոհ է ընկերութեան որոշած կենսաթոշակից, կարող է դիմել զատարանի օգնութեան: Ապահովագրական զործի ամբողջ գործավարութիւնը կենտրոնացած է ձեռնարկողներից պարտադիր կերպով կազմւած ընկերութեան ձեռքում: Բանուրները ոչ մի մասնակցութիւն չունին նրա մէջ: Ապահովագրական ընկեցութիւնն իրաւոնք ունի հրատարակել պարտագիր կանոններ, հրահանգներ, գրքեր, կազմակերպել դասախոսութիւններ, համագումարներ և այլն:

Բանուրների տեսակէտից օրէնքն ունի շատ վիճաւոր և պակասաւոր կողմեր: Նախ բանուրները հեռու են մնում օրէնքի գործավարութիւնից, մի օրէնքի, որ յատկապէս հրատարակած է նրանց համար:

Ինչ ապահովութիւն, թէ ամեն քայլափոխում տեղի չեն ունենալ հազար ու մի զեղծումներ և ով կարող է այնքան մօտ լինել բանուրին, քան թէ ինքը բանուրը: Բանուրական տեսակէտով ապահովագրութեան ամբողջ գործը պիտի յանձնելի բանուրական ինքնավար կազմակերպութիւններին: Այդ չկայ: Դրա համար բանուր գասակարգն անզուլ պիտի մտածէ և անգարում հաւաքէ իր ոյժերը: Ապահովագրական գործին մասնակցելու տեսակէտից օրէնքը պարունակում է իր մէջ մի կէտ, որը չպիտի խուսափէ բանուրների ուշագրութիւնից: Դա ընկերութեան առաջ անձամբ կամ լիազօրի միջոցով պաշտպանելու կէտն է:

Անձամբ պաշտպանելու միտքը բանւորները ողի-  
տի թողնեն:

Նրանց ոյժը անհատական եռանդի և ճարպիկութեան  
մէջ չէ, այլ կազմակերպւած գոյութեան, Օրէնքի յի-  
շածս կէտը պիտի օլոպագործել այն ուղղութեամբ,  
որ կազմակերպւին բանւորների համար իրաւական  
օգնութեան ըիւրօների Դա հրամայական պահանջ է:  
Աշխատաբնդունակութեան կորուստի որոշման համար  
օրէնքն ասում է, թէ կողմերը, այսինքն վասուած  
բանւորն ու ապահովագրական ընկերութիւնը, կարող  
են բժիշկներ հրաւիրել իրենց ընտրութեամբ: Այսուեղ  
էլ բանւորները գործը պիտի տանեն որոշ կազմակեր-  
պութեան միջոցով: Անհատական ընտրութիւնը պի-  
տի միրժել: Ամեն կերպ պիտի աշխատել մասնագէտ  
և բանւորների շահերին նորուած բժիշկների մի-  
խմբակցութիւն ստեղծել, որը կարողանար հաշմանդա-  
մին տալ նրա կորուստի ուղիղ և անաշառ պատկերը  
որ վնասուածը նորից չփառաւի այս կամ այն պատա-  
հական խորհրդատուի չկշռագատաւած որոշումից: Մեզ  
թուում է, որ բանւորները կազմակերպւած ջանքերով  
կարող են ստեղծել ապահովագրական ընկերութեան  
հետ համաձայնութեան զալով ընդհանուր և չեղոք  
բժշկական մի մարմին: Դա էլ հարցի լուծման մի-  
ուրիշ ելքն է:

Տարւայ օրերի քանակն օրէնքն ընդունում է  
280: Ի՞նչ հաշտով: Եթէ նկատի են առնւում կիրակի-  
ներն ու տօները, ապա պիտի տաել, որ օրացոյցը  
85 կիրակի և տօն չի ճանաչում: Եւ վերջապէս, կան  
արդիւնաբերութեան ծիւղեր, ուր, ինչպէս նաւթար-  
դիւնաբերութեան մէջ, ոչ միայն չեն տօնւում կիրա-  
կիները, այլ մինչև անգամ Մկրտութեան և Յարու-  
թեան տօները: Ուրեմն, 280 թիւը մի կամայական  
չուփ է և վերցրած բանապրօսիկ կիրառով: Բանւորնե-  
րը տաօին 280 օրից տեղի են աշխատում: Աւելի

աշխատում են. պակաս ստանում...

Օրէնքը մի կէտում էլ զրկում է բանւորին: Ի՞նչ  
հիման վերայ է իջեցնուում լրիւ աշխատավարձը երկու  
երրորդականի: Զէ որ հիւանդ կամ վնասւած բանւորն  
աւելի պահանջ ունի կանոնաւոր ու առողջապահիկ  
կեանքի, քան թէ առողջը:

Ի՞նչու է նա զրկում իր վարձատրութեան  
մէկ երրորդից:

Առանց այն էլ բանւորն իր ստացած լրիւ օ-  
րավարձով մի պակաս կեանք է վարում, իսկ  
պակասաւոր վարձատրութիւնն աւելի կը ձնշէ նը-  
րա կորացած մէջը: Այդ հաշով ձեռնարկողների  
վարձատրութիւնը մի գանձ չէ, որ մատի փաթաթան  
շինելով, դատափետում են բանւորներին, թէ վեր-  
ջիններս դիտմամբ են վնասում իրենց:

Բանւորները իխտ շահագրգուած են նաև, որ  
օրէնքն առանց բացառութիւնների տարածուի տղ-  
գային տնտեսութեան բոլոր ճիւղերի վրայ: Բացա-  
ռութիւն ընկի ոչ պետական, ոչ հասարակական կազ-  
մակերպութիւնների, ոչ առեստի և արանսալորտի, ոչ  
շինարարական, ոչ տնային արդիւնագործութեան մէջ  
աշխատող բանւորների համար, ոչ մանաւանդ զիւզա-  
տնտեսութեան նկատմամբ: Գիւղատնտեսական ձեռ-  
նարկողները, զիւսաւրապէս կալուածատէր—ազնուա-  
կան, ամենուրեք բացառիկ քաղաքական դիրք ունին  
զրաւած, մանաւանդ բացառիկ է նրանց զիրքը Ռու-  
սաստանում, ուր նրանք զոյն են տալիս պետական  
ողջ քաղաքականութեանը: Հոգատէրերի հաւաստիա-  
ցումներով զիւղատնտեսութեան մէջ չեն գործադրու-  
ում բարդ մեքենաներ որ տեղի ունենան մեծ չա-  
փով գործախտ պատահարներ և յետոյ՝ իբր իրենք  
մօտ լինելով բանւորներին՝ գժբախտութեան դէպրում  
հայրական խնամք և վերաբերմունք անպակաս չեն  
անում նրանցից: Այդ տեսակէտի հետ բանւորները





կարող հաշտւել: Նրանց պահանջը պիտի լինի—  
մի օրէնք եւ օրէնքի հաւասար գործադրութիւն:

Մեր ընթերցողները տեսան, որ ապահովագրական  
գործը ոչ միայն կենտրոնացնուում է ձեռնարկողներից  
կազմած ընկերութիւնների մէջ, այլ և այդ ընկերու-  
թիւններին արւում է լայն ազատութիւն շփւելու մի-  
միանց հետ, սարքելու համագումարներ և այլն: Գաղտ-  
նիք չէ, որ մեր երկրում արգիւնաբերողներն ու  
արևարականներն առանձին պատւի մէջ են: Նրանք  
ունին իրենց կազմակերպութիւնները, և անմիջապէս  
կամ կրգմանակի միջոցներով ազդում են կառավարու-  
թեան քաղաքականութեան վրայ ու այդ քաղաքակա-  
նութեան նժամը մի չափով թեքում իրենց օգտին: Եւ  
ահա ուժեղներին նոր օրէնքը աալիս է նոր միջոցներ  
և ուղիներ՝ էլ աւելի ուժեղանալու: Իսկ այդ ուժեղ-  
ների թոյլ և անկազմակերպ հակառակորդին, բան-  
ուր գասակարգին, օրէնքն այդ գլանում է տալ: Եթէ  
ապահովագրական ընկերութիւններն իրաւունք ունին  
համագումարներ, դասախոսութիւններ կազմակերպե-  
լու և այլն և այլն, ապա ինչո՞ւ այդ իրաւունքը չի  
արւում հիւանդանոցային գրամարկողներին: Մթէ բան-  
ուրները քիչ բան կունենան յայտնելու միմիանց, սովո-  
րելու միմիանցից ինչո՞ւ է այդ մոռացութեան արւում:  
Նրա համար, որ ձեռնարկողները կազմակերպւելով՝  
շատ-շատ մի բան աւելի կարահանջեն ներկայ կա-  
ռավարութիւնից, իսկ բանւորները կազմակերպւե-  
լով հրապարակի վրայ կղնեն ուրիշ հարցեր:

Իսկ գա անցկալի է համարւում: Սակայն կազմա-  
կերպւելու իրաւունքը բանւորների համար խիստ կա-  
րենոր պահանջ է և ոչ մի պատուար չի կարող գրա  
առաջն առնել: Պատուարը բանւորական անգիտակցու-  
թիւնն է, որի գէմ պէտքէ սաքառել բուռն կերպով:  
Կազմակերպութիւնը տանում է դէպի յախթանակ—այդ  
պէտք է յիշեն բանւորները:

ՀՀ Ազգային գրադարան



NL0116924

44.038